



Ե. ՍԵՏՈՆ
ՏՈՄՊՍՈՆ

Ե. ՍԵՏՈՆ
ՏՈՄՊՍՈՆ

ՊԱՏՈՒԱԾ ԱԿԱՆ ԶԻԿԸ

ՊԵՏԼՐԱՏ 1936
ՅԵՐԵՎԱՆ

-6 NOV 2011

325
U-42

պ.



Ե. ՍԵՏՈՆ-ՏՈՄՊՍՈՆ

ՊԱՏՈՒԱԾ ԱԿԱՆՋԻԿԸ

Թարգմ. ռուսերենից Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարներ Գ. ՆԻԿՈԼՍԿՈՒ

ՊԵՏՅՐԱՏ 1936 ՅԵՐԵՎԱՆ

307204013

988

ԿՐՏՍԵՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ՀԱՍԱԿԻ ՀԱՄԱՐ



Պատ. խմբագիր՝ ~~Ա. ԽԱՆՆՆԻ~~
Տեխն. խմբագիր՝ Ա. ԽԱՆՆՆԻ
Մեքագրիչ՝ Ռ. ՆՇԱՆՅԱՆ

Դրա լիժնի լիազոր Ա.—1188 Հրատ. 3881
Պատվեր 1135, ցիքած 3000

Պետրասի սպարան, Յերեվան, II Գնույնացի, 4

БИБЛИОТЕКА
Академии Наук
УССР

ՀԱՍՈՒ ԱՊՐԱՆ
ՀԱՍՈՒ ԱՊՐԱՆ
ՀԱՍՈՒ ԱՊՐԱՆ

869053



1

Հուլիսի խոտը թեքվել էր ու ծածկել հարմարա-
վոր բունիկը, վորի մեջ Պատուած Ականջիկի մայրը թագ-
ցրել էր նրան։ Նա թեթևակի ծածկել էր նրան և, ինչ-
պես միշտ, հրամայել էր նրան «հանգիստ պառկել ու
վոչինչ չխոսել, ինչ ել վոր պատահեր»։ Սակայն ճագա-
րը, չնայած և մայրը նրան պառկեցրել էր հարմարավոր
անկողնու մեջ, այնու ամենայնիվ չէր ուզում քնել, և
նրա փայլուն աչիկները սուր զիտում ելին ուղիղ նրա
վերևում տարածվող կանաչ աշխարհի փոքրիկ մասնիկը։
Ճան ու կարմիր սկուռը, լերկու հայտնի գողեր, բարձր
հայհոյում ելին, մեղադրելով իրար գողութան մեջ, և
թուփը, վորի տակ գտնվում էր Պատուած Ականջիկի
տնակը, մի ակնթարթ դարձավ այդ լերկու կովարար
արարածների կովատեղին։ Հետո շիկահավը բռնեց մի
լերկնագուլն թիթեռ ճագարի ուղիղ ըթի առաջ, իսկ կար-
միր սև բծավոր զատիկը, հանդարտ շարժելով իր հան-
գուցավոր բեխիկները, լերկար զբոսանք կատարեց գետի
վերև, խոտի մի տերևի վրայով և իջավ ներքև մուսի
վրայով։ Այնուհետև նրա ճանապարհն անցնում էր ուղիղ
Պատուած Ականջիկի դնչի վրայով։ Բայց նա վոչ միայն
չշարժվեց այդ ժամանակ, այլ նույնիսկ աչքը չխալթեց

Մի քիչ հետո նա լսեց տերեւների ինչ վոր մի տարո-
րինակ սոսափյուն մոտիկ թավուտում: Դա մի զարմանալի,
անընդհատ շուկ եր: Թեև շուկը կարծես թե քանի գնում
մոտենում եր, բայց քայլերի վոչ մի ձայն չեր լսվում:
Պատռած Ականջիկն անց էր կացրել իր ամբողջ կյանքը
ճահճում (նա հազիվ չերկու շաբթական եր), բայց դեռ
չերբեք չեր լսել ալղալիսի բան: Իհարկե նրա հետաքը-
քությունը սաստիկ զբոլում էր: Մայրը պատվիրել էր
նրան, վոր վորքան հնարավոր է հանդարտ պառկի, բայց
դա հարկավոր եր միայն վտանգի դեպքում: Տարորինակ
շուկի մեջ, վորին չեր ուղեկցում քայլերի ձայն, հազիվ
թե լինեիր վորեւե սպառնալից բան, վորից պետք էր
վախենալ:

Շուկը լսվեց իրենից բոլորովին մոտիկ, ապա թեք-
վեց դեպի աջ, հետո դեպի յետ և կարծես թե սկսեց հե-
ռանալ: Փոքրիկ ճագարն արդեն գիտեր, թե ինչ պիտի
աներ ինքը: Նա դանդաղ բարձրացրեց իր գնդակի նման
կլորիկ մարմնիկը կարճ ստեղծ թաթիկների վրա, դուրս
հանեց բնից իր փոքրիկ կլորիկ գլխիկը և նայեց անտա-
ռի խորքը: Հենց իր արած առաջին իսկ շարժումին շուկն
իսկույն և լեթ դադարեց: Նա վոչինչ չտեսավ և այդ պատ-
ճառով ել մի քայլ առաջ գնաց: Յեւ իսկույն և լեթ լե-
րես լերեսի հանդիպեց մի հսկայական սև ոձի:

— Մայրիկ... — մահու չտի վախեցած կանչեց խեղճ
փոքրիկ ճագարը, չեր հրեշը հարձակվեց նրա վրա:

Նա լարեց իր փոքրիկ տոտիկների ամբողջ ուշժը, վոր
փախչի, բայց ոձը կածյակի արագությամբ բռնեց նրա
ալկանջից և ողակ-ողակ փաթաթվեց անոգնական, փոքրիկ
արարածի մարմնի շուրջը, վորին նա բռնել էր ճաշի հա-
մար:

— Մայրիկ... մայրիկ... — ճատում եր խեղճ փոքրիկ
ճագարն ալն ժամանակ, չեր դաժան հրեշը խեղդում եր
նրան իր ողակներով:

Իհարկե, փոքրիկ արարածի ճիչը պիտի լներ ընդ-



միշտ, բայց ահա անտառի խորքից, նետի պես սլանալով, լեկավ նրա մայրը: Դա արդեն առաջվա լերկչոտ ու անոգնական Մուլի Բմբուտ Պոչը չէր, վորը պատրաստ եր փախչելու նուշնիսկ իր սեփական շվաքից: Մայրական սերը նրան ուժ տվեց: Նրա փոքրիկի ճիշը քաջութունն ենթանչեց նրան, և... հոպ — ցատկեց սարսավելի սողունի վրայով ու այնպես ճարպիկ խփեց ոձին իր լետևի թաթերի սուր ճանկերով, վոր այդ հարվածից ոձը ցնցվեց ու չարացած ֆշշաց:

— Մայրիկ... — թուլլ ճստաց փոքրիկ ճագարը:

Յեվ նրա մայրը նորից ցատկեց և ավելի ուժգին ու կատաղած խփեց ճանկերով զզվելի հրեշին, մինչև վոր, վերջապես նա բաց թողեց լերախից իր գոհի ականջը, փորձելով կծել մայր-ճագարին: Բայց ոձը հաղիվ մի փոքրիկ փունջ պոկեց Մուլիի մազերից, մինչդեռ սև ոձի թեփոտ ողագրահի մեջ արդեն սկսեցին լերեալ արնոտ շերտերը, վորոնք առաջացել էին Մուլիի ճանկերի կատաղած հարվածներից:

Ոձի դրուժունը վատ եր: Յեվ ահա նա թուլացրեց փոքրիկ ճագարին սեղմող ողակները: Պատռած Ականջիկն իսկույն և լեթ դուրս սողաց նրանց միջից ու ծլկվեց թփերի տակ, շնչասպառ, սարսավելի վախեցած:

Նա անմնաս եր, միայն զարհուրելի ոձի ատամները սաստիկ պատռոտել էին նրա ձախ ականջը:

Մուլին այժմ հասել եր իր նպատակին: Նա լերբեք չեր ցանկանում կովել փառքի կամ վրեժ հանելու համար: Նա ամբողջ թափով սլացավ թավուտի խորքը և նրա մանկիկը վազեց նրա լետևից, հետևելով նրա ձուռնի պես ճերմակ փալուն պոչին, վորը ծառայում եր նրան իբրև ուղեցույց ասող, մինչև վոր նա բերեց նրան, վերջապես, ճահճի անվտանգ անկյուններից մեկը:

Ոլիֆանտի հին ճահճ՝ կոչվում եր փշենիներով ու անտառալին մատղաշով ծածկված բացատը, վորի մեջտեղում գտնվում եր ճահճալին լճակն իր վտակով: Տեղ-տեղ այդ բացատում դեռ լերեում էին հին անտառի անձուռնի կոճղերը: Գետնի վրա, չորափայտի մեջ, պառկած էին հին գերանները: Լճակի շուրջը հողը բուսապատվել եր ուռուտով ու բոշխով: Այդ կերը ձիերին դուր չի գալիս և նրանք խուսափում են նրանցից: Բայց կովերը սիրում են բոշխը: Ավելի չոր տեղերը բուսապատվել էին մաւրենիներով ու մանր մատղաշ անտառով: Ծալրամասերը, վորից այն կողմ սկսվում էին դաշտերը, ծածկված էին խեժով հարուստ ամուր մատղաշ սոճիներով:

Ճյուղերի վրայի կենդանի փշատերևը և գետնին թափված — մեռածը — լցնում եր ողբ հրաշալի բուրմունքով, վոր հրճվանք եր պատճառում ամեն մի անցնողի:

Այդ տեղի շուրջը դեպի հեռուն ձգվում էին դաշտերը: Դրանք հաճախ հատվում էին մոտերքում ապրող նենգ և անամոթ աղվեսի հետքերով:

Ճահճի գլխավոր բնակիչները Մուլին ու Պատռած Ականջիկն էին: Նրանց ամենամոտիկ հարևաններն ապրում էին նրանցից բավական հեռու, իսկ ամենամոտիկ ազգականները կտորվել էին: Բայց այդտեղ Մուլիի տունն եր, այստեղ նա ապրում եր իր ձագի հետ միասին և այստեղ Պատռած Ականջիկը սովորեց այն բոլորին, վոր նա պետք է իմանար կյանքում հաջողութուն ունենալու համար:

Մուլին լավ մայր եր և հոգատարությամբ դաստիարակում եր նրան: Առաջինը, վոր նա սովորեց, — դա՛ «պառկել հանգարտ ու վոչինչ չխոսել» կանոնն եր:

Ոձի հետ ունեցած արկածն ապացուցեց նրան այդ կանոնի իմաստութունը: Պատռած Ականջիկը լերբեք չեր մոռանում այդ դասն ու հետագայում միշտ լսում եր:

Յերկրորդ դասը, վոր տվեց նրան մայրը, կաշանում եր նրանում, վոր նա սովորում եր «անկենդան» դառնալ: Այդ կանոնը բղխում եր առաջինից, և Պատուած Ականջիկը սովորեց այն հենց վոր սկսեց վազվզել:

«Անկենդան» դառնալ — դա նշանակում ե «չջարժվել, դառնալ քար»: Հենց վոր ստեղծած երմակ պոչով լավ դաստիարակված ճագարը նկատում ե մոտերքում թշնամուն, նա իսկույն և լեթ կանգ ե առնում, վորովհետեւ բոլոր անտառային բնակիչները գունավորված ելին միևնույն կերպ վորպես և անտառներում յեղած բոլոր անկենդան առարկաները և ուշագրութուն են գրավում իրենց վրա միայն այն ժամանակ, յերբ շարժվում են: Դրա համար ել, լեթե պատահաբար յերկու թշնամիներ հանդիպում են մի տեղում, ապա առաջինը, վորն ավելի շուտ նկատեց իր թշնամուն, կարող ե ինքն աննկատելի մնալ, լեթե նա իսկույն և լեթ «անկենդան» դառնա, այսինքն մնա անշարժ: Այդ դեպքում բոլոր առավելութունները կլինեն նրա կողմը, և նա կարող ե ընտրել մի մոմենտ հարձակման կամ փախուստի համար: Միայն նրանք, վորոնք ապրում են անտառներում, հասկանում են, թե ինչքան կարևոր ե այդ: Յուրաքանչյուր վայրենի կենդանի և յուրաքանչյուր վորսորդ պետք ե ուսումնասիրեն այդ արվեստը, և բոլորն իսկապես վոր կարողանում են այդ անել շատ լավ: Բայց վոչ վոք չեր կարող մրցել այդ բանում Մուլլի Բմբլոտ Պոչի հետ: Պատուած Ականջիկի մայրը սովորեցնում եր նրան իր սեփական որինակով: Քանի վոր նրա առաջ շարժվում եր թավաւում մոր ստեղծած պոչիկը, վորպես ճերմակ բարձիկ, վորը նա տանում եր իր հետ վրան նստելու համար, այնքան ժամանակ նա վազում եր նրա յետևից ամբողջ թափով: Բայց հերիք եր, վոր մայրը կանգ առներ ու «անկենդան» դառնար, նա ևս հպատակվելով մորը նմանվելու բնական ցանկությանը, իսկույն և լեթ անում եր նույն բանը:

Բայց ամենալավ դասը, վոր ստացավ փոքրիկ ճագարն իր մորից, դա մասրենու գաղտնիքն եր, վոր նա

բացել եր նրան: Այդ գաղտնիքը հիմա արդեն շատ հին ե, շուրջ վորպեսզի այն բացատրեմ ձեզ, յես պետք ե պատմեմ թե ինչու մասրենին գժտվել եր կենդանիների հետ:

Վաղ ժամանակներում վարդերը բանում ելին այնպիսի թփերի վրա, վորոնք փշեր չունեցին: Բայց այն ժամանակ սկսուռներն ու մկները ճուղերի վրա մագլցում ելին վերեւ ու պոկում վարդերը, կովերն իրենց յերկար յեղջուրներով շարդում ելին, պարկամուկը փետում եր իր յերկար պոչով, իսկ յեղջերուն կոտրատում եր վարդերն իր սուր սմբակներով: Դրա համար ել հենց մասրենին գինվեց սուր փշերով, վորպեսզի պաշտպանի իր վարդերը, ու անվերջ պատերազմ հայտարարեց այն բոլոր արարածներին, վորոնք բարձրանում են ծառերը, կամ ունեն յեղջուրներ, սմբակներ, յերկար պոչեր: Բայց Մուլլի Բմբլոտ Պոչի հետ մասրենին ապրում եր հաշտ, վորովհետեւ նա եր կարող բարձրանալ ծառը, չունեւ յեղջուրներ, չունեւ սմբակներ և գրեթե չունեւ պոչ:

Իսկապես, Մուլլին յերբեք և վոչնչով չի վնասել մասրենուն: Դրա համար ել նա, ունենալով այդքան թշնամիներ, վերցրել եր փոքրիկ ճագարին իր պաշտպանության տակ: Յերբ խեղճ վախուկին վտանգ ե սպառնում, նա գլխապատառ վազում ե դեպի մասրենու մոտիկ թուփը, վստահ լինելով, վոր սա իսկույն և լեթ նրա պաշտպանության համար կցցի միլիոն սուր և թունավոր դաշույններ:

Այսպիսով այն գաղտնիքը, վորն իմացել եր Պատուած Ականջիկն իր մորից, հետևյալն եր՝ «Մասրենին — քո ամենալավ բարեկամն ե»:

Այդ ամառ ժամանակի մեծ մասը գործադրված եր վայրի, փշենու և մասրենու ուսումնասիրության վրա: Յեւ Պատուած Ականջիկն այնքան լավ եր ուսումնասիրել վայրը, վոր կարող եր շրջել ճահճի շուրջը յերկու տարբեր ճանապարհներով, այնպես վոր վոչ մի անգամ չհե-

առնա մասրենու բարեկամական թփերից ավելի, քան հինգ թռիչքի չափ:

Դրանից վոչ շատ առաջ ճագարի թշնամիները դժգոհութամբ տեսան, վոր մարդը բերեց այդ վայրը փշենու թփերի մի առանձին տեսակն ու տնկեց ամեն տեղ յերկար շարքերով, Այդ թփերն այնքան ամուր ելին, վոր վոչ մի արարած չէր կարող կտորատել դրանք, և ունեյին այնպիսի սուր փշեր, վոր քրքրում ելին ամենադիմացկուն մորթին: Տարեց տարի այդ թփերի թիվը շատանում էր և տարեց տարի վտանգը վայրենի կենդանիների համար ավելանում: Բայց Մուլի Բմբլոտ Պոչը չէր սարսափում դրանից: Զուր չէր, վոր նա մեծացել էր մասրենու թփերի պաշտպանութան տակ: Շներն ու աղվեսները, կովերն ու վոչխարները և նույնիսկ ինքը, մարդը կարող ելին վերքեր ստանալ այդ սուր փշերից: Բայց Մուլին ապրում էր ու բարորութուն վայելում նրանց պաշտպանութան տակ: Յեվ վորքան հեռուն ելին տարածվում այդ փշավոր պատվարները, այնքան անվտանգ էր դառնում վայրը Մուլիի համար: Իսկ այդ նոր սարսափելի փշավոր թփերը կոչվում են «փշալարի ցանկապատ»:

III

Մուլին ուրիշ չերեխաներ չունեց, բացի Պատռած Ականջիկից, և դրա համար ել միայն նրա մասին էր հոգ տանում: Նա չափազանց ճարպիկ էր և ուժեղ, ու գտնվում էր բացառիկ բարենաշող պայմաններում, վորոնք ապահովում ելին նրա հաջողութունը կյանքում:

Ամբողջ ամառը մայրը լեռանդով սովորեցնում էր նրան այն բոլոր հնարքները, վորոնք անհրաժեշտ են ճանապարհ գնալիս, սովորեցնում էր նրան ինչ ուտել ու խմել և վճի բանին չպետք է գիպել: Նա աշխատում էր որ որի վրա սովորեցնել նրան և կամաց-կամաց հաղորդում էր նրան իր բոլոր գիտելիքները:

Նստած մոր կողքին՝ չերեքնուկի դաշտում կամ թա-

վառում, նա աչքը չէր կտրում նրանից, նմանեցնելով նրան, լերբ նա շարժում էր քիթը, վորպեսզի նրա հոտառութունը միշտ մնա մաքուր և չթմանա: Նա դուրս էր քաշում նրա բերանից կերը կամ լիզում նրա շրթունքները, վորպեսզի հավաստիանա՝ արդյոք ինքն ել միևնույն բանն է ուտում: Նմանեցնելով նրան, նա սովորեց թաթիկներով սանրել իր ականջները, կարգի բերել իր մորթին և կրծոտելով հանել իր զգեստի միջից կոծոծները: Նա իմացավ նույնպես, վոր ճագարի խմելու համար պետքական են միայն մասրենու տերևների վրայի ցողի հստակ կաթիլները, վորովհետև շուրը, դիպչելով գետնին, արդեն չի կարող մաքուր լինել: Այդպես սկսեց նա ըմբռնել անտառային գիտութունը, վորն ամենահին գիտութունն է յերկրի լերեսին:

Հենց վոր Պատռած Ականջիկը բավական մեծացավ, այնպես վոր արդեն կարող էր մենակ ման գալ, մայրը սովորեցրեց նրան ազդանշանների կանոնները: Ճագարները հեռագրում են իրար, խփելով գետնին իրենց լետևի թաթիկները: Գետնի միջով ձայնը տարածվում է հեռուն: Հարվածը, վորը չի կարելի լսել գետնից վեց վտանաչափ տարածութան վրա, լսելի կլինի առնվազը հարյուր քալի վրա, լեթե ականջը դնես գետնին: Ճագարները չափազանց սուր լսողութուն ունին, և դրա համար ել կլսեն այդպիսի հարվածը ավելի քան յերկու հարյուր քալի վրա, այսինքն Ուլիֆանտի ճահճի մի ծայրից մյուս ծայրը: Մեկ հարվածը նշանակում է՝ «ուշադիր լսելի», կամ «անշարժացիր»: Յերկու դանդաղ հարվածը նշանակում է «ես տեղ արի»: Յերկու արագ հարվածը նշանակում է՝ «վրտանգ կա», իսկ յերկու հատ մեկը մյուսի հետևից տված հարվածները նշանակում են՝ «գիմիր վախուստի վորքան կարելի լի շուտ»:

Յերբ լեղանակը լավ էր և ձայերը վիճաբանում ելին իրար հետ, — դա մի ճիշտ նշան էր, վոր մոտերքում վրտանգավոր թշնամի չկա, — Պատռած Ականջիկն ստանում

եր մի նոր դաս: Մոլլին սեղմում էր աղանջները, և դանշան եր, վոր նա պիտի սեղմվեր գետնին: Հետո նա վազում էր հեռուն, թավուտի խորքը և այնտեղից նրան ազդանշան եր տալիս հարվածներով, վորոնք կանչում էին նրան: Պատռած Ականջիկը, հնազանդվելով կանչին, իսկույն և լեթ վազում էր այնտեղ, բայց չէր կարողանում գտնել իր մորը: Այդ գեպքում նա ինքն եր, իր հերթին դոփում վորքերով, բայց պատասխան չէր ստանում: Սկըսելով ուշի-ուշով փնտռել նրան, նա գտնում եր նրա քայլերի հետքի հոտը, և ոգտվելով այդ տարորինակ ուղեցույցից, վոր լավ հայտնի չե բոլոր կենդանիներին, բայց բոլորովին հայտնի չի մարդուն, նա գտնում եր այն տեղը, վորտեղ թագնվել եր իր մայրը: Այդպիսով նա ստացավ հետապնդման առաջին դասը, և մոր հետ տափկնոցի խաղալը ծառայում եր նրա համար իբրև լուրջ վորսի նախապատրաստութունը, այն վորսի, վորը կանգնած եր նրա առջև իր ամբողջ հետագա կյանքի ընթացքում:

Իր ուսուցման այդ առաջին ամառը գեռ չէր անցել, և նա արդեն լավ ուսումնասիրել եր բոլոր գլխավոր դասերը:

Նա շատ գեղեցիկ կարողանում եր թագնվել ծառի լետեր, ծղկվել և սեղմվել գետնին, ներկայացնել իրենից մի ճեղք, գուշակել քամու ուղղութիւնը և խճճել իր հետքերը: Նա գիտեր արդեն ինչպես պետք եր ոգտվել փշալարով: Նա լավ ուսումնասիրել եր ավազը, վոր վոչնչացնում ե ամեն ձևի հոտ, ուսումնասիրել եր ցանկապատերն ու բները, սովորեց մի գծվար գիտութուն — դուրս բերել կրկնակի հետք: Բայց և այնպես նա լերբեք չէր մոռանում, վոր ամեն ձևի իմաստութիւն սկիզբը՝ դա «հանդարտ պառկելն» եր, և վոր միակ ու միշտ վստահելի պաշտպանութունը նրա համար՝ դա ծաղիկ մասրենին եր:

Նա ճանաչեց իր բոլոր թշնամիներին և նրանցից խուսափելու միջոցները: Բանն այն ե, վոր ուրուրները, բվերը, աղվեսները, վորսի շները և հասարակ շները, սա-

մուրները, կզաքիսները, կատունները, ժանտաքիսները, իսկ նաև մարդիկ — բոլորն ունեն զանազան սովորութիւններ, և նրանցից յուրաքանչյուրի համար կար պաշտպանութիւն իրեն հատուկ միջոց, վոր և սովորել եր Պատռած Ականջիկը:

Թշնամու մոտենալուն տեղակ լինելու համար, նա պետք ե ամենից տռաջ հույսը դնել իր և իր մոր վրա, ապա միայն ճայի վրա: Դա սովորեցրել եր նրան Մոլլին:

— Յերբեք անուշադիր չլինես դեպի ճայի ցուցմունքները, — ասում եր նրան մայրը: — Նա կովարար թռչուն ե, բամբասաւեր ե և գող, բայց վոչինչ չի վրիպում նրա ուշադրութիւնից: Նա, իհարկե շատ կուզենար մեզ փախել, բայց չի կարողանում, շնորհիվ մասրենուն: Իսկ մեր թշնամիները միևնույն ժամանակ և նրա թշնամիներն են, ահա թե ինչու անհրաժեշտ ե հետևել նրան: Յեթե փայտփորը նախազգուշացնում ե իր ճիշով թշնամու մոտենալու մասին, դու կարող ես նրան հավատալ, վորովհետեւ նա ազնիվ տղա չե: Բայց ուղղակի հիմար ե ճայի հետ համեմատած: Ժայը հաճախ սուտ ե ասում, վոր մի չարանենգ կատակ անի մեկն ու մեկի հետ, բայց և այնպես դու պիտի նրան հավատաս, չերբ նա վատ լուրեր ե բերում:

Փշալարի հետ կատարվող խաղը պահանջում ե մեծ ստանալունութիւն և լավ վորքեր:

— Դա հիանալի խաղ ե, — ասում եր Մոլլին: — Առաջ դու տանում ես շանը ուղիղ գծով և հրահրում ես նրան այն բանով, կարծես թե դու արդեն յենթարկվում ես նրան: Ապա, շարունակելով մնալ նրանից մի թռիչքի հեռավորութիւն վրա, դու ձգում-տանում ես նրան թեք ուղղութեամբ, լերկար թեքվածքով, ուղիղ դեպի փշոտ ցանկապատը, վորը նրա կրծքի հավասարութիւնն ե: Յես տեսել եմ շատ շներ ու աղվեսներ, վորոնք հաշմանդամ են զարծել այդ նույն ձևով, իսկ մի մեծ վորսի շուն նույն իսկ կորստյան մատնվեց: Բայց և չես շատ անգամ

եմ տեսել, վոր ճագարներն ել այդ բանն արել են իրենց կյանքի գնով:

Պատռած Ականջիկը վաղ իմացավ այն, վոր մի քանի ճագարներ յերեք ել չեն իմանում, այսինքն՝ վոր «ծածկվել բնի մեջ» բնավ չի ներկայացնում այնքան լավ, խորամանկ հնարամտութիւն, վորքան կարելի յեր կարծել: Խելացի ճագարի համար դա կարող ե վորոշ չափով ապահովել անվտանգութիւն, բայց հիմար ճագարի համար դա, վաղ թե ուշ, դառնում ե մի մահացու թակարդ: Յերիտասարդ ճագարն ամենից առաջ միշտ ծածկվում ե բնի մեջ, բայց ծեր ճագարն առաջուց վորոնում ե պաշտպանութեան ուրիշ միջոցներ:

Բնում ծածկվելն ոգտակար ե, յեթե պիտի խուսափել մարդուց, շանից, աղվեսից կամ գիշատիչ թռչնից, բայց բունը նշանակում ե՝ անմիջական կորուստ, յեթե քեզ հետապնդում ե ժանտաքիսը, սամուլը, կզաքիսն ու աքիսը:

Ճահճում կային միայն յերկու բներ գետնի մեջ: Նրանցից մեկը գտնվում եր չոր, պաշտպանված բլրակի վրա ճահճի հարավային ծայրում: Այդ բլրի լանջին ճագարներն արեւի վաննա ելին ընդունում լավ յեղանակին: Նրանք տեղավորվում ելին սոճու հոտավետ մշտականաչ փշատերեւների վրա, յերկարաձգվում ելին ու կտավի նման ծիծաղելի դիրք ընդունում, դանդաղ շուռ ու մուռ գալիս մի կողքից մյուս կողքի վրա, կարծես ուզում ելին մի լավ տապակվեն ամեն կողմերից: Դրա հետ նրանք կկոցում ելին աչքները, կծկվում-բացվում ու ճղճղում ելին կարծես ուժեղ ցավից: Մինչդեռ դա նրանց համար ամենամեծ հաճույքն եր:

Բլրակի ուղիղ գագաթին կանգնած եր սոճու մի մեծ կոճղ: Նրա հրեշավոր արմատները վոլորվում ելին դեղին ավազոտ բլրալանջին, վիշապների նման, և նրանց անճուռնի թաթերի պաշտպանութեան տակ վաղուց ի վեր մի բուն եր փորել իրա համար ծեր կավասեր արջամուկը:

Նա որեցոր ավելի ու ավելի կովարար ու դուրագրգիռ եր դառնում և մի անգամ, փոխանակ թագնվելու իր բռնում, կանգ առավ, վոր կովի Ուիֆանտի շան հետ: Այդ կովը նրա համար տխուր վերջ ունեցավ, և Մուլին կարող եր արդեն մի ժամ հետո տիրանալ նրա բնակարանին:

Մյուս բունը գետեղված եր ձարխոտերի թավուտում, յերեքնուկի դաշտի մոտ. նա փոքրիկ եր ու խոնավ և պետք եր գալիս միայն վորպես վերջին ապաստան, անհրաժեշտութեան դեպքում: Դա ել շինել եր մի արջամուկ, վորը, սակայն, բարյացակամ հարևան եր: Բայց նա ել դուրս յեկավ թեթևամտի մեկը, և դրա համար ել նրա մորթին հիմա ծառայում ե իբրև մի մտրակ, վորն աշխատանքի յե դրդում Ուիֆանտի բանող ձիերին:

— Պարզ արդարութիւնն ե դա, — ասում եր ծեր ագարակատերը: — Չե վոր այդ մորթին մեծացել ե գողացված կերի շնորհիվ, վորը կարող եր ոգտագործվել բանող ձիերի կողմից և այդպիսով կվերածվեր բանվորական ուլժի:

Յե՛վ անա ճագարներն աստիճանաբար դարձան յերկու բների միակ սեփականատերերը: Բայց նրանք չելին մոտենում նրանց յերբ դա հարկավոր չեր, վոր ճամփա չզցեն դեպի այդ բները, վորովհետև այդ ճամփաները կարող ելին հալոտաբերել թշնամու դեմ պաշտպանվելու համար ունեցած նրանց վերջին ապաստանը:

IV

Ոգոստոսի պայծառ արեգակը վողողել եր ճահճն իր ճառագայթներով: Ամեն ինչ կարծես թե լողանում եր նրա տաք փայլի մեջ: Փոքրիկ ճահճային թռչնիկը ճովողում եր, նստած լճակի մոտի յերկար յեղեգնիկի վրա: Նրա մոտ յերևում ելին կեղտոտ ջրի փոքրիկ ջրկաներ: Ջրկաներում անդրադառնում ելին կապույտ յերկնքի պատառները, վորոնք դեղին ջրիմուռների հետ միասին կազ-

մում ելին հոյակապ մողայիկա, վորի կենտրոնում դե-
տեղված եր փոքրիկ թռչնիկը վոտքերը դեպի վերև:
Իսկ ափերը խիտ առ խիտ ծածկված ելին վոսկե-կանաչ
ճահճային կաղամբով, վորը թանձր ստվեր եր գցում մութ-
դարչնագույն ճահճային գուղձերի վրա:

Ճահճային թռչնիկը չեր կարող հիանալ գույների
գեղեցիկ խաղով, բայց դրա փոխարեն նա նկատում եր
այն, վոր մեզ համար կանցներ աննկատելի: Նա նկատեց,
վոր ճահճային կաղամբի լայն տերևների տակ թաղնված
յերկու զարչնագույն գուղձեր վոչ թե գուղձեր ելին, այլ՝
կենդանի ստեղծ արարածներ, վորոնց քթիկները չեյին
դադարում շարժվել վերև ու ներքև:

Դրանք Մուլլին ու Պատռած Ականջիկն ելին, նրանք
ձգվել ելին կաղամբի տակ վոչ թե նրա համար, վոր նը-
րանց դուր եր գալիս այդ կաղամբի ծանր հոտը, այլ նրա
համար, վոր շնաճանձերը տանել չեյին կարողանում այդ
հոտը և այդ պատճառով ել թողնում ելին նրանց հան-
գիստ:

Մուլլին ու Պատռած Ականջիկը լեկել ելին ալստեղ,
վոր մի լավ հանգստանան, բայց հանկարծ միշտ աշալուրջ
ճալի նախազգուշացնող ազդանշանը հարկադրեց Մուլլին
քիթը բարձրացնել դեպի վեր և ցցել ափանջները:

Ճահճի միջով նրանց եր մոտենում մի մեծ սև շուն:

— Իսկ հիմա, — ասաց Մուլլին, — սեղմվիր գետնին ու
մի շարժվիր, մինչև վոր լես կհեռացնեմ այստեղից այս
անբանին:

Նա նետի պես սլացավ դեպի շունը և անվախ կտրեց
նրա ճանապարհը:

— Հաֆ, հաֆ, հաֆ, — հաջեց շունն ու նետվեց ճա-
դարի լետից:

Բայց Մուլլին, պահելով իրեն նրանից անընդհատ
աֆսիսի տարածության վրա, վոր նա չկարողանար իրեն
բռնել, տարավ նրան ալստեղ, վորտեղ միլիոնավոր վը-
շեր քրքրեցին նրա քնքույշ ափանջները, — թաղնված փշա-

լարի ցանկապատի մեջ: Շունը չանդռոտվեց և բարձր
կաղկանձոցով լետ վազեց: Մուլլին մինչ այդ շարունակեց
կրկնակի հետքը, ողը և հատող հետքը, այն հաշվով, վոր
շունը կարող եր դեռ լետ գալ, և ապա նորից վերադար-
ձավ դեպի Պատռած Ականջիկը: Նա տեսավ, վոր Պատ-
ռած Ականջիկը, վորի հետաքրքրութունը սաստիկ լար-
ված եր, կանգնել եր՝ վիզը լերկարացրած, լետևի թաթե-
րի վրա կանգնած ու ուշադրությամբ հետևում եր վոր-
սին:

Փոքրիկ ճագարի ալդալիսի անհնազանդութունն այն
աստիճանի բարկացրեց մորը, վոր նա խփեց նրան լետևի
թաթով ու վայր գցեց ուղիղ ցեխի մեջ:

Մի անգամ, իբր նրանք արածում ելին լերեքնուկի
դաշտում, նրանց գլխի վերևը սավառնող կարմրապուշ
բազեն ընկավ նրանց վրա: Մուլլին լետևի վոտքերով քա-
ցի տվեց նրան, կարծես ծաղրելով, և նետվեց դեպի մաս-
րենու թփուտը, ուր բազեն, պարզ եր, չեր կարող հաս-
նել նրան: Մուլլին սլանում եր այն ճանապարհով, վորը
տանում եր դեպի ջախի կուլտը: Կածանը ծածկված եր
դետնատարած բույսերով, և Մուլլին, աչքը չկտրելով բա-
զելից, կանգ առավ, վոր կրժի ճամփան կարող ցողուննե-
րը: Պատռած Ականջիկը հետևում եր նրան և, առաջ անց-
նելով, կրծեց ելի միջանի ցողուններ, վորոնք կտրում
ելին ճանապարհը:

— Ապրես: Միշտ անցքերն ազատ պահիր, վորովհետև
նրանք կարող են հաճախ պետք գալ քեզ: Նրանք չպետք
ե լայն լինեն, բայց միշտ մաքրված: Կրժոտիր այն բոլո-
րը, վոր նման ե ճանապարհը փակող սողաբույսի և մի
գեղեցիկ որ դու կիմանաս, վոր դու թափարդ ես կրծել:

— Ի՞նչ բան ե թափարդը, — հարցրեց Պատռած Ական-
ջիկը, քորելով աջ ափանջը լետևի ձախ վոտքով:

— Թափարդը նման ե գետնատարած բույսի, բայց
նրանք բույս չեն և ավելի վատ են, քան ամեն մի բա-
զե աշխարհի լերեսին, — պատասխանեց Մուլլին, հալացքը



գցելով արդեն հեռացած բազելի կարմիր պոչին: — Ավելի վատ է նրա համար, վոր թակարդը թագնվում է կածանի վրա և պառկած է ափսոսեղ որ ու գիշեր, սպասելով այն ըրպելին չերբ կարելի կլինի քեզ բռնել:

— Չեմ կարծում, վոր նրանց կհաջողվի բռնել ինձ, — հայտարարեց Պատուած Ականջիկը լերիտասարդական ինքնավստահութամբ:

Նա բարձրացավ լեռնի թաթերի վրա, վոր իր ծնոտը քորի մատղաշ ծառի հարթ բնի վրա: Պատուած Ականջիկըն ինքն ել չնկատեց իր արածը, բայց նրա մայրն իսկույն ամեն ինչ հասկացավ: Դա նույն ձևի նշան եր, ինչպիսին է տղաների ձայնի փոփոխումը: Մոր համար պարզ լեզավ, վոր Պատուած Ականջիկը դադարում է լեռնի վրա լինելուց և շուտով կդառնա հասակավոր ճագար:

V

Հոսող ջրի մեջ ինչ վոր հմայք կա: Ո՞վ չգիտի և ո՞վ չի զգացել այդ: Յերկաթուղու շինարարը կանգնեցնում է թուժբը լայն ճահճի կամ լճի միջով, կամ նույն իսկ ծովախորշի միջով, բայց մեծագույն հարգանք է տածում դեպի հոսող ջրի ամենաբարակ շիթը, ուսումնասիրում է նրա ուղղութիւնը և աշխատում է նրան սիրաշահել:

Անապատում ծարավից ուժասպառ լեզած ճամփորդը մահու չափ վախենում է խմել լճակի կանգնած ջրից, վորը ծածկված է բոշխով, մինչև չգտնի ափսիսի ավազան, վորի կենտրոնում կարելի չէ նշմարել անընդհատ շարժման մեջ գտնվող բարակ մաքուր շիթը: Դա նշան է հոսող, կենդանի ջրի, և, նկատելով այն, ճամփորդը հաճուքով հագեցնում է իր ծարավը:

Հոսող ջրում կախարդական ուժ է պարունակվում: Յեւ գազանն ոգտվում է գետակի այդ ուժից ծայրահեղ կարիքի ըրպելին: Անտառների վայրենի արարածը, անդադար հալածանքի լենթարկվելով իր մահացու թշնամու կողմից, վորը հոտառութամբ վորոնում է նրա հետքը,

հասկանում է, վոր կորուստը մոտ է և արդեն զգում է իրեն նրա տիրապետութեան ներքո: Կենդանու ուժերը հլուծվել են, նրա բոլոր խորամանկութիւններն իզուր են անցնում, բայց ահա կածանը բերում է նրան ջրի մոտ, կենդանի, հոսող ջրի մոտ: Կենդանին գցում է իրեն ջուրը և, հետևելով զով հոսանքին, լող տալով անցնում է ափ, և վերականգնված ուժերով նորից ուղեվորվում դեպի անտառ:

Այսպես է հոսուն ջրի կախարդական ուժը: Վորսի շները մոտենում են այն նույն տեղին, վորտեղից հալածված վորսը ընկել եր ջուրը, Բայց նրանք անգոր են վորևե հնարք անելու: Նրանց իշխանութիւնը խախտված է ուրախ հոսանքի կողմից, և վայրենի կենդանին, վոր ազատվել է ջրի միջոցով, շարունակում է իր ազատ կյանքը:

Դա լերկորդ մեծ գաղտնիքն եր, վոր հայտնեց Մուլին իր վորդուն:

— Հիշիր, — ասաց նա նրան, — վոր մասրենուց հետքո ամենալավ բարեկամը — ջուրն է:

Ոգոստոս ամսվա մի տաք, հեղձուցիչ գիշեր Մուլին տարավ իր վորդուն թավուտի միջով: Նրա պոչի տակի բամբակի պես ճերմակ բարձիկը փայլում եր առջևում և ծառայում եր իբրև ուղեցույց լապտեր Պատուած Ականջիկի համար: Հապտերը հանգչում եր, հենց վոր նա կանգ եր առնում ու նստում գետին:

Կատարելով մի քանի այգալիսի զբոսանքներ և ժամանակ առ ժամանակ կանգ առնելով ականջ դնելու համար, նրանք հասան լճակի ծայրին: Բվերը նրանց վերևը, ծառերի վրա, լերդում ելին՝ «քնիր, քնիր», իսկ խորը ջրի մեջ խրված գերանի վրա նստած եր մինչև կոկորդը զով վաննալի մեջ ընկզմված գորար, և լերդում եր, նմանեցնելով սոխակի լերդին:

— Հետևիր ինձ, — ասաց ճագարերեն Մուլին իր տղային և... — շրժի, — իսկույն թռավ ջուրը և լող տվեց դեպի լճակում պառկած գերանը:

Պատուած Ականջիկը ցնցվեց, սակայն, ելի մի «հւֆ» անելով, ընկավ ջուրը, շնչասպառ լինելով ու արագ շարժելով քիթը: Կատարելով նույն շարժումները, վոր նա անում էր ցամաքի վրա, նա շարժվում էր առաջ նաև ջրի մեջ և համոզվեց, վոր կարող է լող տալ: Նա լողում էր մօր լետեից, մինչև վոր հասավ ջրի մեջ ընկած գերանին և, բարձրանալով նրա չոր ծայրի վրա, նստեց Թրջված Մուլիի մօտ, վոր շրջապատված էր լեղեգներից ու ջրից կազմված շիրմալով, վորոնք գիտեն գաղտնիք պահել: Այդ որվանից, լերը տաք, մութ գիշերներին սպրինգֆիլդի ծեր աղվեսը գալիս էր ճահճի մօտ վորս վորոնելու, Պատուած Ականջիկը ականջ էր դնում, թե վորտեղ է լերգում գորտը: Նրա ձայնը ծառայում էր նրան իբրև ցուցմունք, թե ուր պետք է փախչել վտանգ լեղած դեպքում: Յեվ այդ ժամանակից նրան թվում էր, վոր գորտը լերգում է՝ «եստեղ արի, արի մեզ մօտ, չեթե վտանգ է սպառնում»:

Դա վերջին դասն էր, վոր ստացավ Պատուած Ականջիկն իր մորից:

Ասենք դա ծրագրից դուրս մի դաս էր, վորովհետև բազմաթիվ փոքրիկ ճագարներ աջնպես լերբեք ել չեն ստանում այդ դասը:

V1

Վայրենի կենդանիներից վոչ մեկը չի մեռնում ծերութունից: Վաղ թե ուշ գալիս է նրա կյանքի վողբերգական վախճանը: Ամբողջ խնդիրն այն է, թե վորքան լերկար կարող է նա խուսափել իր թշնամիներից: Բայց Պատուած Ականջիկի կյանքը ծառայում է իբրև ապացույց, վոր չեթե ճագարը բարեհաջող անցկացնի իր վաղ լերիտասարդութունն ու հասնի իր հասունացած հասակին, ապա հեշտությամբ կարող է անցկացնել այդ հասակն ու վոչնչանալ միայն իր կյանքի վերջին լերբորդում, այն շրջանում, վոր մենք անվանում ենք ծերութուն:

Թշնամիները շրջապատում են ճագարին ամեն կող-



մից: Նրանց առորչա կյանքը ներկայացնում է անխուսա-
փելի վտանգից խույս տալու բախտավոր դեպքերի մի ամ-
բողջ շարք: Շները, աղվեսները, կատուները, ժանտաքիս-
ները, ջրաշները, կզաքիսները, ջրասամուլները, ոձերը,
բազենները, բվերը, մարդիկ և նույն իսկ միջատները — բո-
լորն ուզում են սպանել ճագարներին: Ճագարներին
վիճակված է հարյուրավոր արկածների լենթակա լինել և
առնվազն որական մեկ անգամ փախչել վորջան ուշժ ունեն,
վստահելով իր վտաքերի արագությանը և իր խելքի
հնարագիտությանը:

Հաճախ սպրինգֆիլդի ատելի աղվեսը հարկադրում
էր նրանց փրկութուն վորոնել խոզերի համար շինած
ցանկապատի ավերակներում, վոր կառուցված էր փշա-
լարից գետակի մոտ: Բայց անցնելով այդտեղ նրանք ար-
դեն կարող էին հանդիստ դիտել, թե ինչպես աղվեսը
վիրավորում է իր թաթերը, զուր փորձելով կարատել
փշալարը:

Մեկ լերկու անգամ Պատուած Ականջիկին, վորի լե-
տեվից ընկել էր շունը, հաջողվում էր իր տեղակ նրա
առջև հանել ժանտաքիսին, վորը նույնքան վտանգավոր
էր իրա համար, վորջան և շունը:

Մի անգամ Պատուած Ականջիկը կենդանի գերի ըն-
կավ մի վորսորդի ձեռքը, վորին ոգնում էին մի շուն և
ժանտաքիսը: Բայց ճագարին հաջողվեց բախտի բերմամբ
փախչել հենց հետևյալ ուր: Շատ անգամ կատուն քշել
էր նրան ու նա ստիպված էր լեղել մտնել ջուրը, և շատ
անգամ էլ նա ստիպված էր փրկութուն վորոնել բազե-
ներից ու բվերից: Բայց վտանգի ամեն մի տեսակի հա-
մար նա պաշտպանության մի առանձին ձև ուներ: Մայ-
րը սովորեցրել էր նրան գլխավոր հնարքները, բայց, մե-
ծանալով նա կատարելագործում էր դրանք և հնարում
նորերը: Յեվ վորջան ավելի լեր մեծանում ու խելացի
դառնում, այնքան նա քիչ էր վստահում իր վտաքերին և
ավելի լեր հավատում իր խելքին:

Նրանից վոչ հեռու ապրում էր լերիտասարդ վորսի
շունը Ռենջեր անունով: Ռենջերի տերը լերբեմն հար-
կադրում էր նրան իր համար ճագար վորոնել: Յեվ մեծ
մասամբ շունը հետապնդում էր հենց Պատուած Ականջիկին,
վորին այդ վորսը զբաղեցնում էր վոչ պակաս, քան
իրենց վորսորդներին, վորովհետև վտանգը զրգուում էր
նրան և նույն իսկ բավականութուն պատճառում:

— Ա՛խ մայրիկ, — ասում էր նա: — Ահա նորից գա-
լիս է շունը: Այսոր լես ստիպված կլինեմ մի փոքր վազ-
վզելու:

— Դու շատ խիզախն ես, իմ Պատուած Ականջիկ
տղաս, — պատասխանեց նա: — Դու հափազանց հաճախ ես
վազվզում:

— Բայց, մայրիկ, այնքան դուրեկան և ուրախալի
քան է այդ հիմարի վրա ծիծաղելը: Յեվ դրա հետ էլ
դա ինձ համար այնպիսի մի ոգտակար մարզանք է: Յես
կդոփեմ, լեթե վատ դրության մեջ ընկնեմ, և դու այդ
ժամանակ վազիր արի ու շան ուշագրութունը գրավիր,
վոր լես կարողանամ փախչել նրանից:

Յեվ ահա՞ Պատուած Ականջիկն սկսում էր վազել,
իսկ Ռենջերը գտնում էր նրա հետքը և հալածում նրան
այնքան, մինչև վոր ճագարը հոգներ: Այդ ժամանակ Պա-
տուած Ականջիկը թխկոցով հեռագրում էր իր մորն ոգնու-
թյան հասնելու, և նա գալիս էր, վոր շան ուշագրութու-
նը գրավի, կամ էլ հենց ինքը վորեւ խորամանկության
միջոցով ազատվում էր շան ձեռքից: Նրա հնարքներից
մեկի նկարագրութունը ցույց կտա ձեզ, թե վորջան
հիմնականորեն ուսումնասիրել էր Պատուած Ականջիկը ան-
տառային կյանքի գիտությունը:

Նա գիտեր, վոր իր հոտը փռվում է գետնին, և վոր-
ջան շատ է ինքը տաքացած, այնքան այդ հոտն ուժեղ է:
Այսպիսով, լեթե նա կարողանար հեռանալ գետնից և մի
կես ժամ հանդիստ մնալ, վորպեսզի թե ինքը հովանա և
թե իր հետքի հոտը վերանա, նա վտանգից կազատվեր:

Դերա համար ել մի անգամ, շան հալածանքից հոգնած, նա վազեց դեպի գետակի ափը, փորտեղ մասրենու թփուտներ կային, և այնտեղ այնքան խճճված հետքեր դուրս բերեց, այնքան ողակներ, փոր շունն իսպառ շփոթվեց և շնորհիվ դրա բավական լերկար ժամանակով հապաղեց: Այդ ժամանակ նա ուղղակի գնաց անտառ ու թռիչքներով, իրեն պահելով քամուն հակառակ, ցատկում եր ծառաբնից ծառաբուն: Կանգ առնելով մի ծառի մոտ, նա փախչում եր լետ իր հետքերով, ապա նետվում մի կողմ և վազում դեպի մյուս ծառը: Հետո, վերադառնալով իր առաջվա տեղը, նա սպասում եր մինչև շունը կանցներ առաջ նրա առաջին հետքով: Այդ ժամանակ նա վերադառնում եր իր նախկին հետքի վրա և այդտեղ մի մեծ թռիչք եր անում դեպի կողք, փոր «խառնի հոտը»: Հետո, ցատկելով բարձր կոճղի վրա նա բարձրանում եր նրա գագաթն ու այնտեղ նստում, թմբիկի կամ քարի տեսք ընդունելով:

Ռենշերը, հետապնդելով ճագարին, շատ ժամանակ կորցրեց, աշխատելով գլուխ հանել մասրենու թավուտում, և ճագարի հետքերի հոտը բավականաչափ թուլացավ, չերբ նա, վերջապես, գտավ իսկական հետքը, փորը և բերեց նրան առաջին ծառի մոտ: Այդտեղ նա սկսեց նորից պառտվել հետքը գտնելու համար, և լերկար ժամանակ կորցնելուց հետո, նորից գտավ: Բայց հետքը հանկարծ կտրվեց: Նորից շունն ընկավ անախորժության մեջ և նորից սկսեց պտտվել, փոր հետքը գտնի: Շրջաններն ավելի ու ավելի ելին լայնանում, մինչև փոր նա չանցավ ուղիղ այն ծառաբնի տակով, փորի վրա նստած եր ճագարը: Բայց հովացած հոտը, այն ել ցուրտ որը, չի իջնում ներքե: Պատռած Ականջիկը չարժվեց և փոշնչով չմասնեց իր ներկայությունը ծառաբնի վրա, այնպես փոր շունը վազելով անցավ նրա մոտով և չնկատեց նրան:

Սակայն, նա նորից վերադարձավ լետ և, կանգ առնելով, սկսեց հոտոտել ծառաբնի ներքևի մասը, այն նույն ծառաբնի, փորի մոտով նա անցավ:

— Այո, դա անկասկած ճագարի հոտ է: — Բայց հոտն արդեն թույլ եր, կարծես վաղուցվա լիներ: Բայց և այնպես շունն սկսեց բարձրանալ բարձր կոճղի վրա:

Վախը պատեց ճագարին, չերբ շունը, փնչացնելով քիթը, բարձրանում եր ծառաբնի վրայով: Բայց Պատռած Ականջիկը չեր կորցնում հոգու արիությունը: Քամու ուղղությունը բարենաշող եր նրա համար, և նա վորոշեց վալը թռչել, հենց փոր Ռենշերը կհասնի մինչև ճանապարհի կեսը: Բայց նա առաջ չգնաց: Սովորական տուն պահող շունը կտեսներ գերանի վերևի ծայրին նստած ճագարին, բայց հետքով գնացող փորսի շունը չեր նկատում նրան: Յեվ վորովհետև հետքի հոտը բոլորովին վերացել եր, ուրեմն և Ռենշերը ճագարեցրեց վորոշումներն ու գերանից ցած թռավ: Պատռած Ականջիկը փրկված եր:

VII

Պատռած Ականջիկը չերբեք չեր տեսել ուրիշ ճագար, բացի սեփական մորից: Հազիվ թե նա մտածում եր նույն իսկ, փոր կարող են գոյություն ունենալ ուրիշ ճագարներ: Նա ավելի ու ավելի հաճախ ստիպված եր անշատվել իր մորից, բայց նա այդ միջոցին մենակություն չեր զգում, վորովհետև ճագարները կարիք չունեն հասարակություն: Յեվ անա մեկ անգամ սեպտեմբերին, այն ժամանակ, չերբ նա գտնվում եր հողմածիզ չորափայտի կույտերի մեջ, փորի միջով նա մի նոր անցք եր բացում դեպի մեծ թավուտը՝ գետակի մոտ, նա հանկարծ տեսավ արևառ բլրալանջին, լերկնքի ֆոնի վրա, ոտար ճագարի գլուխն ու ականջները: Այդ լեկվորը գոհ տեսք ուներ, դիտելով իրեն անծանոթ վարը, և շուտով, ցատկոտելով, ուղեվորովեց Պատռած Ականջիկի ճամփաներից մեկով դեպի նրա ճահիճը: Մինչ այդ անհայտ մի զգացմունք համակեց Պատռած Ականջիկին: Դա բարկություն և ատելություն մի խառնուրդ եր, փոր կոչվում եր խանդ:

Անծանոթը կանգ առավ ծառերից մեկի մոտ, վորտեղ Պատռած Ականջիկը սովորութիւն ուներ վեր ձգվելու, չետեի թաթերի վրա կանգնած, և քսելու իր ծնոտը ծառի բնին, աշխատելով ինչքան կարելի չէ վերև հասցնել: Պատռած Ականջիկը կարծում էր, վոր նա այդ բանն անում է միայն իր սեփական բավականութեան համար, բայց այդ անում են բոլոր արու ճագարները և դրանով մի քանի նպատակի չեն հասնում: Ամենից առաջ այդպիսի ծառից ճագարի հոտ է գալիս, և այդ պատճառով ել ոտար ճագարներն իսկույն իմանում են, վոր այստեղ ճահիճն արդեն պատկանում է ճագարների ընտանիքին և ուրիշները բնակվել չեն կարող: Ապա նորեկն իմանում է այդ հոտով, պատկանում է արդյոք այդ հոտը թողնող ճագարը նրա ծանոթների թվին, իսկ տարածութիւնը գետնից մինչև այդ տեղը ցույց է տալիս նրա հասակը:

Յեւ ահա, ի մեծ բարկութիւնս իր, Պատռած Ականջիկը տեսավ, վոր նորեկ ճագարն ամբողջ գլխով բարձր էր իրենից — խոշոր ու ամրակազմ արու: Մի նոր, անհայտ եզացմունք տիրեց նրան: Սպանութեան վոզին մտավ նրա մեջ: Նա ուժգին ծամեց դատարկ բերանով և, ցատկելով հարթ գետնի վրա, դանդաղ դոփեց վոտքով՝ «թը՛փ... թը՛փ... թը՛փ...»: Դա մի հեռագիր էր ճագարների լեզվով, վոր նշանակում է՝ «կորիւր իմ ճահճից, կամ դուրս արի կովի իմ դեմ»:

Ոտար ճագարը ցցեց ականջները V թվանշանի նման, մի քանի վայրկյան նստած մնաց այդպես ուղիղ, և ապա, իջնելով առջևի թաթերի վրա, թխկացրեց չետեի վոտքերով ավելի բարձր և ազդու՝ «թը՛փ... թը՛փ... թը՛փ...»:

Այդպիսով պատերազմը հայտարարված էր:

Նրանք սկսեցին կողքի մոտենալ իրար, աշխատելով լուրաքանչուրը պահել իրեն քամուն հախառակ և սպասելով հարձար մոմենտի՝ հարձակման համար: Անծանոթը խոշոր, ուժեղ արու չէր, ամուր մկաններով, բայց Պատռած Ականջիկը տեսավ նրա մի քանի սխալներից, վոր

նա ուժեղ չէր հնարքներում ու խորամանկութիւններում, և հույս ուներ հաղթելու իր ամբութեան ու ծանր կշռմի շնորհիվ:

Վերջապես, նա մոտեցավ, և Պատռած Ականջիկը հանդիպեց նրան վորպես մի փոքրիկ սատանի ճուտ: Յերբ նրանք կպան իրար, բարձրացան վեր ու խփեցին իրենց չետեի վոտքերով: Թը՛փ, թը՛փ, հարվածներն ուժգին տեղում ելին փոքրիկ ճագարի վրա, և խեղճ Պատռած Ականջիկը գլխոնձի տալով գլորվեց մի կողմ: Նույն մոմենտին ոտար ճագարը մոտ ցատկեց ու կծեց նրան: Պատռած Ականջիկը մի քանի փունջ իր ստեղծ կորցրեց, նախ քան կարողացավ վոտքի կանգնել: Բայց Պատռած Ականջիկը ճարպիկ էր և փախավ մի փոքր հեռուն, վոր թշնամին չկարողանար հասնել նրան: Սակայն կռիվը չէր վերջացել: Պատռած Ականջիկը նորից հարձակվեց ոտար ճագարի վրա և նորից գլորվեց ցած, իսկ ոտար ճագարը նորից սաստիկ կծեց նրան: Նա իհարկե չէր կարող մեծամարտել այդպիսի ուժեղ թշնամու հետ, և շուտով նա ստիպված էր իր կյանքի փրկութեան մասին մտածել:

Վերքերով ծածկված, նա թռավ վոտքի սև սկսեց փախչել: Բայց թշնամին կրնկակոխ հալածում էր նրան, աշխատելով վոշ միայն դուրս քշել նրան իրա ճահճից, այլ և ուղղակի կյանքից զրկել: Պատռած Ականջիկն արագ և թեթև վոտքեր ուներ, իսկ ոտար ճագարն այնքան խոշոր էր ու ծանրակշիւ, վոր շուտով հրաժարվեց հետապնդողներից, և այդպիսով Պատռած Ականջիկն ազատվեց վրտանգավոր դրութիւնից, քանի վոր նա արդեն ուժասպառ էր լինում վերքերից, վորոնք դժվարացնում ելին նրա շարժումները: Բայց այդ որովանից նրա համար սկսվեց վախի թագավորութիւնը: Նա գիտեր, թե ինչպես պետք էր խուսափել բվերից, շներից, կզաքիսներից, մարդկանցից, բայց չգիտեր ինչ անել, չէր նրան հալածում էր ոտար ճագարը: Նա կարողանում էր միայն թագնվել ու պառկել հանդարտ, մինչև վոր կգտնեն իրեն, և այդ ժամանակ դիմել փախուստի:

Թեղճ փոքրիկ Մոլլին սաստիկ վախեցած էր։ Նա չէր կարող ոգնել Պատուած Ականջիկին և մտածում էր շան մասին, վոր ինքը թագնվի։ Սակայն մեծ ճազար ուտով գտավ նրան։ Նա ուզում էր փախչել նրանից, բայց չկարողացավ, վորովհետև այնքան ճարպիկ չէր, վորքան Պատուած Ականջիկը։ Սակայն ոտար ճազարը չէր ուզում սպանել նրան, այլ ընդհակառակը, սկսեց սիրտա-տածել նրան։ Բայց վորովհետև նա նրան ասելի չէր, և ինքն անընդհատ աշխատում էր փախչել այդ ճազարից, սա սկսեց դաժան վարվել նրա հետ։ Նա հանգիստ չէր տալիս Մոլլիին, ամեն որ հալածելով նրան և հաճախ, կատաղած նրա վերաբերմունքից, հարձակվում էր նրա վրա ու, վայր գցելով գետնին, փետում էր նրա փափուկ, քնքուշ ստեր։ Բայց նրա անփոփոխ մտադրութունն էր սպանել Պատուած Ականջիկին, վորի փրկութունն անհնարին էր թվում։ Ուրիշ ճահիճ, ուր նա կկարողանար տեղափոխվել, չկար։ Վորտեղ էլ վոր նա թագնվելու լիներ մի փոքր ննջելու համար, նա ստիպված էր միշտ պատ-րաստ լինել գլխապատառ փախչելու, խուսափելով մահացու վտանգից։ Ամեն որ մեծ ճազարը գաղտագողի մոտենում էր այն տեղին, վորտեղ Պատուած Ականջիկը տեղավորվում էր հանգստանալու, բայց ամեն անգամ սա կարողանում էր ժամանակին արթնանալ ու դիմել փախուստի։ Սակայն սա իսկական փրկութուն չէր։ Նա փրկ-կում էր իր կյանքը, — դա ճշմարիտ էր, բայց վորքան թշվառ ու տխուր էր դառնում այդ կյանքը։ Նրա համար ծանր էր անընդհատ զգալ իր անզորութունը, տեսնել ամեն որ, թե ինչպես է ծեծում ու չարչարում իրա խեղճ մորն այն ոտար ատելի ճազարը, վոր տիրել էր նրա բո-լոր արտատեղիները, հարմարավոր անկյուններն ու այն-քան զժվարությամբ անց կացրած կածանները։

Դժբախտ Պատուած Ականջիկը հապկացավ, վոր ավա-րը բաժին է ընկնում հաղթողին, և ատեց ոտար ճազարին նույն իսկ ավելի շատ, քան ատում էր ժանտաքիսին ու աղվեսին։

Ինչո՞վ կարող էր դա վերջանալ։ Պատուած Ականջիկը հյուժվել էր անընդհատ վազվզոցից, արթուն մնալուց ու վատ սննդից։ Բայց փոքրիկ Մոլլիի ուժերն էլ թուլանում էին։ Ոտար ճազարն ամեն ինչի պատրաստ էր, միայն թե վերջ տար Պատուած Ականջիկին, և վերջ ի վերջո վրձ-ռեց նույնիսկ սարսափելի հանցագործութուն կատարել։ Սովորաբար որինավոր ճազարները, վորքան էլ վոր իրար ատելու լինեն, սակայն միշտ մոռանում են փոխադարձ թշնամությունն ընդհանուր թշնամու լերևալու դեպքում։ Բայց այդտեղ, չերբ ճահճի վրա սկսեց սավառնել մի մեծ բազե, ոտար ճազարը, լավ թագնված, մի քանի անգամ դուրս էր քշում Պատուած Ականջիկին բաց տեղը, վոր-պեսզի նա ընկնի բազելի ճանկը։

Յե՛վ իսկապես, մեկ լերկու անգամ բազեն դրեթե հասնում էր նրան և Պատուած Ականջիկը փրկվեց միայն շնորհիվ մասրենու, չե՛վ մեծ ճազարն ինքը քիչ մնաց ընկներ այդ գիշատիչ թռչնի ճանկը։ Պատուած Ականջիկը նորից փրկված էր, բայց նրա կյանքը չթեթևացավ դրանից։ Նա վճռեց փախչել իր մոր հետ միասին՝ հենց հետևյալ գիշերը և փնտռել վորեք տեղ աշխարհիս լերեսին մի ուրիշ ապաստարան։ Հանկարծ նա լսեց ծեր վորսի շան, Ռեն-ջերի ձայնը, վոր թրև էր գալիս ճահճի լեզերքներից, փնջացնելով քիթը։ Յե՛վ այդ միջոցին Պատուած Ականջիկը վճռեց մի հուսահատ միջոց գործադրել։ Նա դիտմամբ կտրեց անցավ շան ճանապարհը։ Սկսվեց մի հուսահատ հետապնդում։ Պատուած Ականջիկը լերեք անգամ շրջեց ճահճի շուրջը, մինչև վոր համոզվեց, վոր իր մայրը լավ է թագնված, իսկ նրա մահացու թշնամին նստած է իր մշտական բնում։ Յե՛վ ահա Պատուած Ականջիկը վազեց ուղիղ դեպի իր թշնամին և, ցատկելով նրա վրայից, ամ-վողջ թափով խփեց նրա գլխին լետեի վոտքով իր թռիչ-քի ժամանակ։

— Թշվառ հիմարի գլուխ, հիմա լես կսպանեմ քեզ, — բղավեց ոտար ճազարն ու, դուրս թռչելով բնից, ըն-

կալ Պատուած Ականջիկի ու շան արանքը: Շունը սաստիկ հաջողով սլացալ նրա տաք հետքերով: Ոտար ճագարի ծանրութունն ու մեծութունը նրան խոշոր առավելության ելին տալիս ուրիշ ճագարների հետ կովելիս, բայց ախտեղ դրանք նրա համար ճակատագրական նշանակութուն ունեցին: Նա շատ քիչ հնարքներ գիտեր, միայն գուցե «կրկնակի հետքը», «ողակը» և «բունը», — մի խոսքով այն, ինչ վոր հայտնի չեր ամեն մի շատ չերիտասարդ ճագարի: Բայց այդ վորսի մեջ նա նուէն իսկ դրանով ել չեր կարող ոգտել, վորովհետեւ շունը չափազանց մոտիկ եր, և նա չեր կարողանում անել վոչ կրկնակի հետքեր, վոչ ել ողակներ: Իսկ այդտեղ վորտեղ կային բներ — նա չգիտեր:

Վորսը կատարվում եր ուղիղ գծի վրա: Մեծ ճագարն իր փրկութունը վորոնում եր մասրենու մեջ: Բայց գուր: Վորսի շան հաջողը չեր դադարում վոչ մի րոպե: Պատուած Ականջիկն ու Մուլին, թագնվելով մի պաշտպանված տեղում, պարզ լուծ ելին մասրենու ճյուղերի ճարձատյունն ու շան կադկանձոցը, վորի քնքույշ ականջները ծակծկում ելին փշերը: Բայց հանկարծ այդ ձայները մի անգամից դադարեցին: Լսվեց ինչ վոր քաշկուտոց, ապա բարձր և հուսահատ մի ճիչ...

Պատուած Ականջիկը գիտեր, թե ինչ ե նշանակում այդ և սարսուռ: Բայց նա շուտով հանգստացալ և միայն ուրախանում եր, վոր նորից տեր դարձալ սիրելի հին ճահճին:

VIII

Ծեր Ոլիֆանտը, իհարկե, միանգամայն իրավունք ուներ այրել ցախի բոլոր կուտերը ճահճի արևելյան և հարավային լեզերքներին և հեռացնել խոզերի համար շինված փշալարե ցանկապատի ավերակները, վոր գրտնրվում եր գետակի հենց ներքևի ծայրին: Բայց Պատուած Ականջիկի և նրա մոր համար դա շատ անախորժ եր:

Ցախի կուտերի մեջն ելին նրանց հարմարավոր տնակները, իսկ խոզերի ցանկապատի ավերակներում գտնվում եր նրանց զլխավոր ամրոցը:

Նրանք աչքան չերկար տիրապետում ելին ճահճին, վոր ամեն մի փոքրիկ մասը համարում ելին իրենց սեփականութունը, նույնիսկ այն տեղը, վորտեղ գտնվում ելին Ոլիֆանտի շենքերը: Դրա համար ել նրանք թշնամաբար ելին վերաբերվում դեպի ոտար ճագարները, նուէն իսկ չեթե նրանք անասունների բակն ելին մտնում:

Յեղանակները տաքանալիս, հունվար ամսին, Ոլիֆանտները կտրտեցին մեծ անտառի մնացորդները ճահճի շուրջը, և այդպիսով չորս կողմից կրճատեցին ճագարների կալվածները: Բայց և այնպես ճագարները չելին ուղում թողնել ճահճը, վորը քանի գնում փոքրանում եր, վորովհետեւ այդտեղ նրանց հայրենիքն եր և ուրիշ չերկըններ տեղափոխվել չելին ուղում: Նրանց ամենորոյա վտանգներով լի կյանքը շարունակվում եր առաջվա պես: Վերջին ժամանակում ճագարներին մի փոքր անհանգստացրեց կղաքիսը, վորը դետակի հոսանքով դեպի վեր անցել, հասել եր նրանց մեկուսի ապաստանին: Սակայն նրանց հաջողվեց ուրծնել նրանից, ուղղելով այդ անկոչ հյուրին դեպի Ոլիֆանտի հավանոցը: Բայց և այնպես նրանք լիովին հավատացած չելին, վոր նա ալլես չի վերադառնա, և այդ պատճառով ել վճռեցին մի վորոշ ժամանակ չմտնել բները, վորոնք իրականում կարող ելին թակարդ դառնալ նրանց համար: Նրանք պահվում ելին մասրենու թփուտներում և ցախի դեռ մնացած կուտերում:

Առաջին ձյունը բոլորովին վերացել եր և չեղանակը պարզ եր ու տաք: Մուլին, վորը բնատիրգմի թեթևակի ցավեր եր զգում, ուղևորվեց ներքևի թավուտը հապալասի խոտ գտնելու: Պատուած Ականջիկը նստած եր գունատ արևի ճարագալթներով լուսավորված գետափին: Ոլիֆանտի տան կառուրի վրալի ծանոթ խողովակից լեկնող ծուխը բաց չերկնագուէն եր թվում անտառային մա-

ցառուտների միջից և, բարձրանալով վերև, ընդունում էր դեղնավուն լեռանգավորում՝ պարզ կապույտ լեռկնքի ֆոնի վրա: Արեգակից վոսկեգոծված կտուրը կիսով չափ թագնված էր մասրենու թփուտների չեռեր, վորոնք ըստ վերոտ տեղերում թվում էին մութ ծիրանեգույն, իսկ արևի տակ փողփողում էին ծիրանիով և վոսկով: Տան լեռում կանգնած էր ամբարը, նրա կտուրը նույնպես վոսկեգոծված էր արևի ճառագայթներով:

Այդտեղից հասնող ձայներն ու ծխին խառնվող բուրմունքը իրազեկ դարձրին Պատռած Ականջիկին, վոր անասունների բակում կենդանիներին կերակրում էին կաղամբով: Պատռած Ականջիկի բերանից ջուրը գնում էր, լերբ միայն մտածում էր այդպիսի համեղ հյուրասիրության մասին: Նա անվերջ թարթում էր աչքերը և ներս քաշում քթով ախորժելի հոտը, վորովհետև կաղամբը միշտ էլ նրա սիրելի ուտելիքն էր: Ավանդ, նախորդ գիշերը նա սողոսկել էր կալը, վոր ձեռք գցի այնտեղից լերբենուկի գլուխների մի քանի խղճուկ փնջիկ, իսկ վոչ մի խելացի ճագար չի այցելի միևնույն տեղը լերկու լերեկո իրար լեռների:

Յեվ անա այդ պատճառով էլ Պատռած Ականջիկն արեց այնպես, ինչպես թելադրում էր իրեն իր առողջ դատողությունը: Նա անցավ այնտեղ, վորտեղ կաղամբի հոտը չէր հասնում, և ընթրեց մի փունջ խոտով, վոր քամին բերել էր դեղից: Դրանից մի փոքր ավելի ուշ լերբ արդեն ժամանակն էր գիշերելու պատրաստություն տեսնել, հայտնվեց նաև Մուլին, վորն արդեն կուլ էր տվել իր առողջարար խոտը և ապա համեստ ընթրել էր կեչու քաղցր ընձուղներով՝ արևառ բլրալանջին:

Մինչ այդ արևն անհայտացավ, ուղեվորվելով ինչ վոր տեղ իր գործերով: Արևելքում սկսեց բարձրանալ մի հսկայական սև վարագույր, վորը շուտով ծածկեց ամբողջ լեռկիները, հանգրեց լույսն ու աշխարհը դարձրեց շատ մռայլ մի վայր:

Այդ միջոցին լեկավ մի ուրիշ չարագործ — քամին — և, ոգավելով արևի բացակայությունից, էլ ավելի անախորժ բաներ արեց: Յեղանակն ավելի ու ավելի լեր ցրտում և նույն իսկ ավելի վատ էր դառնում, քան այն ժամանակ, լերբ գետինը ծածկված էր ձյունով:

— Ինչ սարսափելի ցուրտ է: Վորքան ափսոսում եմ, վոր այլևս չկա մեր քանդված վառարանի խողովակը, — նկատեց պատռած Ականջիկը:

— Լավ կլիներ ես գիշեր բնում լինելինք սոճու կոճղի մոտ, — պատասխանեց Մուլին: — Բայց կղաքիս մորթին դեռ չեն կախել ցանկապատի վրա՝ բակի ծայրին, և դրա համար ավելի լավ է մենք չգնանք այդտեղ:

Սոռոչավոր ընկուզենին այլևս չկար: Նրա բունը, վոր պառկած էր ցախի բակում, ապաստան էր ծառայում կղաքիսին, վորից նրանք այդքան վախենում էին: Բայց նրանք չգիտեին այդ: Այդ պատճառով էլ նրանք ուղևորվեցին ցատկոտելով դեպի լճակի հարավային կողմը և այնտեղ, ընտրելով ցախի մի կույտ, մտան նրա մեջ և տեղավորվեցին գիշերելու, պահելով քիթը քամու ուղղությունը և տարուբերելով քիթն ամեն կողմի վրա, վոր ժամանակին իմանան, թե վոր կողմից է սպառնում վրտանգը: Քամին ժամ առ ժամ ավելի լեր ցրտում, իսկ կես գիշերին մոտ սկսեց մանր կոշտ ձյուն գալ: Նա խըշշում էր չոր տերևներին և սուլոցով անցնում ցախի կույտի ներսը: Թվում էր թե այդպիսի գիշերը չէր կարող տրամադրություն տեղծել վորս անելու, բայց սպրինգֆիլդի ծեր աղվեսն ուրիշ կարծիքի չէր: Նա գնում էր, քիթը պահած քամու ուղղությամբ, վորոնելով իր համար մի ապաստան, և հանդիպելով ցախի կույտին, հանկարծ քնած ճագարների հոտն առավ: Նա մի ակնթարթ կանգ առավ և ապա սկսեց կամաց սողոսկել դեպի ցախը: Քամու և սառած ձյունի աղմուկը թույլ տվեց նրան բոլորովին մոտենալ, նախքան Մուլին կսեր չոր տերևների թեթևակի ճարճատյունը նրա վոտքերի տակ: Մուլին մի

Թեթև դիպավ Պատուած Ականջիկի բեխերին, և, յերբ աղվեսը հարձակվեց նրանց վրա, ճագարներն յերկուով ել արդեն վտարի վրա ելին: Բանն այն է, վոր նույն իսկ քնած տեղը ճագարների վտարերը միշտ պատրաստ են թռիչքի: Մուլին դուրս թռավ կուրացնող թիփու ուղիղ դեմը: Աղվեսը, ցատկելով, վրիպեց ու չբռնեց Մուլին, բայց սլացավ նրա լետեից, իսկ այդ միջոցին Պատուած Ականջիկը վազեց մյուս կողմը:

Մուլիի առջև միայն մի ճանապարհ կար. նա սլացավ քամուն հակառակ և վորոշ չափով հեռացավ աղվեսից, վորը թաղվեց դեռ չսառած ճահճային տիղմի մեջ: Մուլին շուտով հասավ լճակի լեզերքին: Բայց նրա համար արդեն վերադարձ չկար, նա պիտի սլանար առաջ:

Լավեց ջրի ճղփունը: Մուլին ցատկեց լեղեղների մեջ ու ընկղմվեց խորը ջրի մեջ:

Աղվեսը նույնպես նետվեց նրա լետեից: Բայց սառը վաննան այնքան ել դուր չեկավ տիկին աղվեսուհուն մի այդպիսի գիշեր և նա վերադարձավ լետ: Իսկ Մուլին, տեսնելով իր առջև միայն մի լեռ, անցավ լեղեղների միջով ու լող տվեց դեպի մյուս ափը: Բայց քամին հանդիպական եր, ջուրը լիքն եր ձյունով, վորը դժվարացնում եր նրա շարժումները: Դիմացի ափի մոտ շերտը թվում եր շատ հեռու, և դրա հետ, — նա չգիտեր, — գուցե աղվեսն այնտեղ ապաստում եր նրան:

Բայց նա քիփ սեղմեց ականջները, վոր հեշտ լինի պալքարել ալիքների դեմ, արիաբար լող եր տալիս դեպի առաջ, լարելով իր բոլոր ուժերն ու կռվելով քամու և հոսանքի դեմ: Սառը ջրի մեջ յերկար լող տալուց հետո նա, սաստիկ հոգնած, արդեն գրեթե հասել եր լեղեղների հեռավոր լեզրին, յերբ լողացող ձյունի մի հսկայական զանգված կտրեց նրա ճանապարհը: Յեվ դրա հետ քամին ել լճափին վռնում եր տարօրինակ, կարծես, աղվեսային ձայնով, վոր վերջնականապես զրկեց նրան



կորովից: Նա մղվեց հեռու դեպի լեռ, նախ քան նա կարող եր ազատվել լողացող ձյունից:

Նա նորից լող տվեց դեպի առաջ, բայց դանդաղ, ախ, վորքան դանդաղ: Իսկ լերը նա հասավ վերջապես բարձր լեղեգների լեզրին, նրա ուշտերն սպառվեցին, թաթիկները փայտացան, խիզախ սրտիկը նվաղում էր, և նրա համար արդեն միևնույն էր՝ սպասում է արդյոք նրան աղվեսը մյուս ափին, թե չե: Ծիշտ է, նրան թեպետ և հաջողվեց անցնել լեղեգներից, բայց, ընկնելով ջրիմուռների տիղմի մեջ, նա չկարողացավ լող տալ այնպես, ինչպես հարկն է: Նրա շարժումները դանդաղացան ու կորցրին իրենց սահունությունը, նրա թաթիկների թույլ թափահարումներն արդեն չէին մոտեցնում նրան ցամաքին, իսկ շուրջը գոյացող սառույցը, վերջապես բոլորովին կանգնեցրեց նրան: Յերբ արդեն դադարեցին շարժվել նրա թույլ փայտացած անդամները, մի քանի բոպե հետո դադարեց շարժվել նաև նրա փոքրիկ ստեղծ թիկը: Մոլլիի հեղ խափ աչիկները փակվեցին ընդմիջում...

Բայց լճափին նրան սպասող աղվես չկար, վոր պատահաբար նրան իր ագահ ծնոտներով: Պատռած Ականջիկը, խուլ տալով թշնամու առաջին հարձակումից, խուլուն և լեթ սլացավ լեռ, վոր աղվեսին շեղի մի կողմ և ոգնի իր մորը: Նա տեսավ աղվեսին լերը սա պտույտ էր գործում լճակի շուրջը ուղիղ Մոլլիի հանդեպ դուրս գալու համար: Բայց նա քաշեց նրան իր լեռից և, հասցնելով հեռավոր փշալարե ցանկապատին, թողեց նրան այնտեղ խիստ չանգոռաված գլխով: Այդտեղից նա վերադարձավ ափ, վորոնում էր, հետախուզում ու դուրս տալիկներով: Բայց բոլոր նրա վորոնումներն իզուր անցան՝ նա չկարողացավ գտնել եր մորը և այլևս լերեք չտեսավ նրան: Նա այդպես ել չիմացավ լերեք, թե ինչ լեղավ մայրը, վորովհետև նա քնած էր հավիտենական քնով, իր մտերիմ ջրի սառցային գրկում, վորը լերեք չի հայտնում իր գաղտնիքները...

Խեղճ փոքրիկ սպիտակապուշ Մոլլի: Նա խիզախ մարտիկ էր գոյության դժվարին պայքարում: Նրա կյանքն իզուր չանցավ և շարունակվում էր նրա վորդու մեջ: Նրա միջոցով իր խելքն ու փորձը նա հանձնեց իր տոհմին:

Պատռած Ականջիկը շարունակում էր ապրել ճահճում: Ծերունի Ուլիֆանտը մեռավ այդ ձմեռ, իսկ վորդիները չափազանց անհոգ էին, և այդ պատճառով ել դադարեցին մաքրել ճահճն ու նորոգել ցանկապատերը: Այդ ճահճի մի տարվա ընթացքում ել ավելի խուլ դարձավ: Բուսնեցին նոր ծառեր և թփուտներ, իսկ վայր ընկած փշավոր ցանկապատները սարքեցին ճագարների համար այնքան շատ ամրոցներ ու լավ ապաստարաններ, վոր վոչ շները, վոչ աղվեսները սիրտ չէին անում թափանցել այդտեղ: Յեվ այդտեղ է, վոր մինչև հիմա ել ապրում է Պատռած Ականջիկը: Նա դարձավ մեծ, ուժեղ ճագար և չի վախենում վոչ մի հակառակորդից: Նա արդեն շատ լերեխաներ ունի և մի սիրունիկ դարչնագույն կին, վորին նա գտել էր հայտնի չե թե վորտեղից: Յեվ այնտեղ, այդ ճահճում, նա ինքը և նրա լերեխաների լերեխաները կապրեն ու բարորություն կվայելեն դեռ շատ տարիներ, և դուք կարող եք տեսնել նրանց ամեն մի արևոտ որ, լեթե միայն դուք դիտեք, թե ինչպես և լերը պիտի դոփեք վոտքով, վոր դուրս կանչեք նրանց:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



ՀՀ Ազգային գրադարան



NL0383356

14/10/72

49

988

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

Յ. ՇԵՏՈՆ—ՏՈՄՓՏՈՆ
ՐՎԱՆՈՔ ՄՍԿՕ
ԳԻՆ. ՍՏՐԱ ԵՐԵՎԱՆ

8215
U-42

իր սրտ